

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԳՄՄՆ «ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՅ» ՊՈԱԿ/ ՎԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԵՋ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄՈՒՄԸ
ԽՃԱՆԿԱՐ ՄԵԹՈԴՈՎ

ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐ՝ ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՅ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀԱՍՄԻԿ ԲԵՅԲՈՒԹՅԱՆ

ՈՒՍՈՒՑԻՉ՝ ԱԼԻ ՆԱ, ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԴՊՐՈՅ՝ ԼԻՃՔԻ ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՅ

Ք. Մարտունի

2022թ.

Բովանդակություն

1. Ներածություն-----	1
2. Գրական ակնարկ-----	5
3. Փորձարարական հետազոտություն	
3.1.Խմբի նկարագիր-----	9
3.2. Փորձարարական դաս 1-----	9
3.2.1. Փորձարարական դաս 2-----	10
3.3.2. Վերլուծություն կամ եզրակացություն-----	11
Գրականության ցանկ-----	12
Հավելված	
Դասապլան 1-----	14
Դասապլան 2-----	16
Թեստ -----	18

Ներածություն

Կենսաաբանություն առարկայի դասավանդման մեջ շատ կարևոր են համաշխարհային արդի զարգացումները: Գիտատեխնիկական առաջընթացի աննախադեպ արագությունը հասարակական կյանքում տեղի ունեցող վերափոխումները նպաստում են հանրակրթության դերի աճին և այն արմատական բարեփոխումներին որոնք կիրականացվեն դպրոցում և դարձել են ժամանակի հրամայական: Հանրակրթական դպրոցում(կենսաաբանություն) առարկայի ուսուցումը, որպես միջնակարգ կրթության պարտադիր բաղադրիչներից մեկը, նպատակ է հետապնդում ապահովել բնության և կենդանի օրգանիզմների մասին սովորողների գիտելիքների ձեռքբերումը, դրանց ճանաչողության մեթոդների տիրապետումը, հմտությունների և կարողությունների ինչպես նաև կարողունակությունների ապահովմանը որոնք էլ բերում են արժեհամակարգի ձևավորմանը: Երկիր մոլորակը կենդանի օրգանիզմների և անկենդան մարմինների միասնությունն է, մի բարդ համակարգ որի տարրերն իրար հետ բազմակուսանիորեն կապված են: Կենդանի նյութի կազմավորվածության տարբեր մակարդակները՝ մոլեկուլային, օրգանոիդային, բջջային, հյուսվածքային, օրգանային, օրգանիզմային, պոպուլացիոն- տեսակային, կենսացենոզային և կենսոլորտային: Յուրաքանչյուր մակարդակ ուսումնասիրում են կենսաբանական տարբեր գիտություններ, մակարդակների կառուցվածքագործառական կազմառչվածությունն ապահովում է դրանց փոխադարձ կապը մի մակարդակի ներառումը մյուսի մեջ: Լյանքի կազմավորվածության բոլոր մակարդակներում կենդանի նյութը ենթակա է էվոլյուցիոն փոփոխությունների: Կենդանի օրգանիզմների շարքում հատուկ տեղ է գրավում մարդը: Մարդը բնության օբյեկտ է և, միաժամանակ սոցիալական էակ: Մարդու օրգանիզմին նույնպես հատուկ են նյութերի փոխանակությունը, գրգռականությունը, ինքնակարգավորումը, ինքնավերաարտադրումը, աճը, զարգացումը: Գիտության, արդյունաբերության, գյուղատնտեսության զարգացման շնորհիվ ստեղծվել են բարեկեցիկ պայմաններ մարդու գոյատևման աշխատանքային գործունեության համար: Հաճախ առաջանում են մարդու և բնության մեջ ձևավորված փախադարձ կապերի լուրջ խախտումներ: Այդ պատճառով երևան են գալիս էկոլոգիական սուր հիմնահարցեր: Կենսաաբանության դասընթացը ունի հստակ նպատակ՝ կենսաբանական և էկոլոգիական գրագիտությամբ օժտված անձի դաստիարակումը, որը գիտակցի կյանքի, որպես երկրի վրա բարձրագույն արժեքի, նշանակությունը և կարողանա բնության հետ իր հարաբերությունները կառուցել կյանքի, մարդու և շրջակա միջավայրի նպատամաբ հարգանքի հիման վրա, լինի հասարակության և ինքն իր հետ ներդաշնակ:

Կենսաաբանություն առարկայի ուսումնառության նպատակները ըստ կրթական աստիճանների

1. Տարրական դպրոցում(Ես և շրջակա աշխարհը) առարկայի դասավանդման նպատակն է՝ ձևավորել տարրական գիտելիքներ բնության, նրա բաղադրիչների, կենդանի օրգանիզմների և անկենդան մարմինների միասնությամբ և փոխադարձ կապի, մարդ-բնություն փոխհարաբերությունների մասին:
2. Հիմնական դպրոցում կենսաբանության ուսուցումը պետք է ապահովի. Լյանքի հիմնական հատկությունների, կազմավորվածության տարբեր մակարդակների վրա Լյանքի նյութի կառուցվածքային-գործառական հիմնական դրսևորումների, օրգանիզմների բազմազանության, մարդու՝ որպես կենսաբանական և սոցիալական էակի օրգանական աշխարհի պատմական զարգացման հիմնական ուղիների , կենդանի օրգանիզմների և միջավայրի միջև փոխազդեցությունների վերաբերյալ գիտելիքների ձեռքբերումը: Մարդու հիգիենիկ դաստիարակությունը՝ առողջ ապրելակերպի ձևավորման, մարդու ֆիզիկական, հոգեկան և բարոյական առողջության ապահովման նպատակով: Հիմնական դպրոցի սովորողը պիտի ունենա որոշակի կարողունակություններ՝ դիտարկելու, նկարագրելու, համադրելու, համեմատելու և եզրակացություններ կատարելու: Պլանավորի և իրականացնի փորձեր, գրաֆիկների և գծապատկերների միջոցով, մեկնաբանի ստացված արդյունքները ՏՀՏ-ի միջոցով: Սովորողը պետք է կարողանա աշխատել համագործակցային խմբում, լինի հանդուրժող, արդարամիտ, կրի պատասխանատվություն սեփական անձի և այլոց նկատմամբ, գնահատի մարդկային գործունեության ազդեցությունը բնության վրա, մերժի բնության նկատմամբ սպառողական վերաբերմունքը:
3. Ավագ դպրոցում սովորողը պետք է տիրապետի բջջի և օրգանիզմի բազմազան, աճման, զարգացման, ժառանգականության և փոփոխականության օրինաչափություններին: Ունենա գիտելիք՝ կենդանիների և մանրէների սելեկցիայի, կենսատեխնոլոգիայի, էկոլոգիական համակարգերի և տիրապետի դրանց ճանաչողության մեթոդներին: Սովորողը պետք է կարողանա՝ դիտարկել, մոդելավորել, արդյունքները ընդհանրացնել և եզրահանգումներ կատարել, օգտվել համակարգչային տեխնոլոգիաներից: Սովորողը պետք է կարողանա ունենալ հետևյալ կարողունակությունները
 - Պատասխանատու վերաբերմունք սեփական առողջության նկատմամբ
 - Հետևի առողջ ապրելակերպի կանոններին
 - Կարողանա խուսափել վնասակար սովորույթներից
 - Ունենա վստահություն բնական երևույթների ճանաչման գործընթացում
 - Էկոլոգիական ընդհանուր գրագիտություն և շրջակա միջավայրի նկատմամբ պատասխանատվություն ցուցաբերելու կարողություն
 - Կարևորի բնական գիտությունների դերը և նշանակությունը քաղաքակրթության զարգացման և անհատի ձևավորման գործում

- Ըմբռնի բնության հետ ներդաշնակ ապրելու անհրաժեշտությունը:

<<Կենսաբանություն>> առարկայի ուսուցումը միջնակարգ դպրոցն ավարտող ցանկացած աշակերտի մեջ պետք է ապահովի արժեհամակարգի կարևոր տարրեր, որոնք կարտահայտվեն նրա գործողությունների, վերաբերմունքի և վարքի միջոցով: Դպրոցն ավարտող ցանկացած անձ պետք է արժեքների, վերաբերմունքի, հմտությունների, գիտելիքի և քննադատական ընկալման կարողունակություններ ունենա .

 - ❖ Գիտակցի, որ իր համար կարևորագույն արժեքներ են գիտելիքները, աշխատանքային հմտությունները, մասնագիտական վարպետությունը:
 - ❖ Կարևորի բարոյական չափանիշները և քրիստոնեական ու համամարդկային արժեքները, լինի ազնիվ, արդարամիտ, ապրումակցող և բարեկիրթ:
 - ❖ Լինի նախաձեռնող, դրսևորի արժանավայել պահվածք:
 - ❖ Հարգի մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները, լինի մարդասեր, հանդուրժող, ունենա քաղաքացիական մտածողություն, հարգանք և պատասխանատվություն, քաղաքակիրթ վերաբերմունք ձեռք բերի ուրիշ ժողովուրդների և նրանց մշակույթների հանդեպ:
 - ❖ Ունենա ինքնաճանաչողության և ինքնաքննադատական ընկալում:
 - ❖ Մշտապես հոգ տանի իր առողջության մասին, կարևորի մարմնակրթության դերը, հետևի առողջ ապրելակերպի և անվտանգ կենսագործունեության կանոններին կյանքում:

Գրական ակնարկ

Ուսուցումը մի բարդ ու ակտիվ գործընթաց է, որը տեղի է ունենում սովորողի ներսում: Որպես ուսուցիչ մենք չենք կարող սովորեցնել, մենք միայն կարող ենք օգնել և աջակցել ուսուցմանը և ապահովել լավ ուսուցման համար անհրաժեշտ համապատասխան ուսուցման միջավայր, նյութեր և գործընթաց: Մենք կարող ենք սովորողների համար ստեղծել մտածելու հնարավորություններ, կազմակարգել ու առաջնորդել նրա փորձառության ձեռքբերումը:

<<Ուսուցման մեթոդը>> բարդ ու բազմակողմանի հասկացություն է: Առաջին հերթին դա պայմանավորված է հենց ուսուցման գործընթացի բարդությամբ: Վերջինս իր մեջ ներառում է նրեք կարևոր խնդիր՝

1. Ի՞նչ սովորեցնել (կրթության բովանդակություն)
2. Ի՞նչու՞ և ի՞նչի՞ համար սովորեցնել (կրթության նպատակներ)
3. Ի՞նչպե՞ս սովորեցնել(ուսուցման մեթոդիկա):

Հանդիսանալով ուսուցման գործընթացի միջուկը՝ մեթոդը իրար է կապում նախապես պլանավորված նպատակը և վերջնական արդյունքը:

Խճանկար (Ձիկսո, Jigsaw)

Խճանկարը համագործակցային ուսուցման մեթոդ է, այն մշակվել և փորձարկվել է Տեխասի համալսարանում Էլլիոթ Արոնսոնի և նրա գործընկերների կողմից ,ապա՝ Սլավինի կողմից ենթարկվել է լրամշակման: Խճանկարը համագործակցային ուսուցման մեթոդ է, որի կիրառության ժամանակ սովորողները խորամուխ են լինում ուսումնական նյութի որոշակի հատվածի, որոշակի ասպեկտի, որոշակի հիմնախնդիրների մեջ և դրանք ուսուցմանում դասընկերներին:

Խճանկարը աշակերտների թիմային առաջադիմության մեթոդից տարբերվում է նրանով, որ սովորողները խորամուխ են լինում նյութի որոշակի ասպեկտի մեջ:

Խճանկարի փուլերը

Խճանկարի փուլերը ներկայացնենք աղյուսակի տեսքով

Փուլը	Նկարագրությունը
Նյութի ուսումնասիրություն և տեղեկատվության հավթում	Սովորողները բաժանվում են հենակետային խմբերի: Խմբի յուրաքանչյուր անդամ դառնում է որևէ ենթաթեմայի

	<<փորձագետ>>: Փորձագետները ուսումնասիրում են իրենց ենթաթեման, հավաքում տեղեկատվություն:
Աշխատանք փորձագիտական խմբում	Խմբի սովորողները համեմատում են և հարստացնում իրենց նյութերը:
Աշխատանք ուսումնական խմբում	Յուրաքանչյուր <<փորձագետ>> հենակետային խմբի մյուս անդամին սովորեցնում է իր ենթաթեման:
Ավարտական աշխատանք	Սովորողները անհատական աշխատանք են ներկայացնում ամբողջ թեմայից:
Ամփոփում	Արդյունքների ամփոփում ըստ անհատական և խմբային ցուցանիշների:

Քայլ 1. Հենակետային խմբերի ձևավորում

Խմբեր ձևավորելիս անհրաժեշտ է առաջնորդվել աշակերտների թիմային առաջադիմության մեթոդի մոտեցմամբ: Այդ կերպ կձևավորվեն ինչպես առաջադիմությամբ, այնպես էլ աղջիկ-տղա իմաստով տարասեր խմբեր: Խմբերի ձևավորումից հետո ուսուցիչը հայտարարում է խմբային աշխատանքների կանոնները օրինակ՝

- Առաջադրանքի իրենց հանձնարարված հատվածն ավարտելուց հետո սովորողները պետք է մնան խմբի հետ այնքան ժամանակ, մինչև բոլորն ավարտեն
- Խմբի յուրաքանչյուր անդամ պատասխանատու է որ բոլորը հասկանան և կարողանան կատարել առաջադրանքը
- Եթե կան հարցեր և անհասկանալի հատվածներ ապա աշակերտը նախ և առաջ դիմում է իր թիմակիցների օգնությանը, հետո եթե դրա կարիքը կա, նաև՝ ուսուցչին:

Կանոններն ընդունելուց հետո ուցուցիչը ձևակարգում է առաջադրանքը: Հիմնական խմբի անդամները, միմյանց աջակցելով ընթերցում են ամբողջ նյութը ապա քննարկում անհասկանալի հասկացությունները, հատվածները:

Քայլ 2. Փորձագիտական խմբերի ձևավորումը

Երբ աշակերտը ծանոթանում է ամբողջ նյութին ,հիմնական (մայր խմբի յուրաքանչյուր անդամի տրվում է առաջադրանքը և փորձագիտական թերթիկը): Առաջադրանքը կարող է լինել նյութի առանձին հատվածի ուսումնասիրություն, խնդրի որոշակի ասպեկտի վրա կենտրոնացում: Առաջադրանքը ստանալուց հետո սովորողները հավաքում են նյութեր իրենց ենթաթեմայի վերաբերյալ ապա փորձագիտական խմբի անդամների հետ կիսում են իրենց նյութերը, կատարում

ճշգրտումներ: Փորձագիտական խմբի անդամները նաև որոշում են թե՛ ինչպես են սովորեցնելու իրենց մայր խմբերի անդամներին (աղյուսակ, պաստառ, դիագրամ):

Փորձագիտական խմբերում նույնպես պետք է ընդգրկել առաջադիմությամբ տարասեռ աշակերտներին: Մերկայացնենք աղյուսակ թե՛ ինչպես պետք է ձևավորվեն հենակետային՝ մայր և փորձագիտական խմբեր: Իմաստի ընկալման փուլում կարող ենք հանձնարարել երկու բովանդակ ազատ շարադրանք պատասխանել երկու կարևոր հարցերին՝ ի՞նչ սովորեցինք, ինչքա՞ն սովորեցինք: Իսկ եթե շարադրանքը տրվում է կշռադատման փուլում, ապա կարող ենք տալ հետևյալ հարցը՝ կարո՞ղ եք սովորածը իրականացնել կյանքում: Հարցի միջոցով ուսուցիչը կորոշի դասից ձեռք բերած գիտելիքի հստակ չափը:

Հենակետային կամ մայր ուսումնական խմբեր

1-ին խումբ	2-րդ խումբ	3-րդ խումբ	4-րդ խումբ
Վանյա- ք.ա	Մարի-ք.ա	Անի-ք.ա	Արա-ք.ա
Շուշան- մ.ա	Մերի-մ.ա	Դավիթ-մ.ա	Անուշ-մ.ա
Անուշ – մ.ա	Արմեն- մ.ա	Ֆելիքս- մ.ա	Սիրարփի-մ.ա
Գարիկ- գ.ա	Նարեկ- գ.ա	Կարեն-գ.ա	Սոնա-գ.ա

- Բ.ա.- բարձր առաջադիմություն ունեցող
- Մ.ա.- միջին առաջադիմություն ունեցող
- Տ.ա.- ցածր առաջադիմություն ունեցող

Փորձագիտական խմբեր

1-րդ խումբ	2-րդ խումբ	3-րդ խումբ	4-րդ խումբ
Վանյա-ք.ա	Մարի-ք.ա	Անի-ք.ա	Արա-ք.ա
Անուշ-մ.ա	Ֆելիքս-մ.ա	Արմեն-մ.ա	Մերի-մ.ա
Դավիթ-մ.ա	Շուշան-մ.ա	Սիրարփի-մ.ա	Անուշ-մ.ա
Կարեն-գ.ա	Սոնա-գ.ա	Նարեկ-գ.ա	Գարիկ-գ.ա

Կարևոր է նաև փորձագիտական թերթիկների մշակումը: Դրանք աշակերտներին կօգնեն կենտրոնանալ հիմնական հարցերի վրա: Օրինակ՝ ենթադրենք կենսաբանությունից ուսումնասիրում ենք՝ արյունահոսությունների տեսակները և առաջին օգնությունը այս դեպքում : Փորձագիտական խումբը ուսումնասիրում է մեկ կոնկրետ նյութ: Բոլոր խմբերին տրվում է փորձագիտական թերթիկի նմուշ

1. Ինչպե՞ս կանխել զարկերակային արյունահոսությունը

2. Ինչպե՞ս կանխել երակային արյունահոսությունը
3. Ինչպե՞ս կանխել մազանոթային արյունահոսությունը
4. Փորձե՞ք գտնել որևէ կարևոր բան այս երեք կետերն ուսումնասիրելիս

Հիմք ընդունելով այս թերթիկը փորձագիտական բոլոր խմբերը արյունահոսությունների տեսակները ուսումնասիրում է ըստ փորձագիտական վերոհիշյալ թերթիկի չափանիշների:

Քայլ 3. Փորձագետները սովորեցնում են հենակետային խմբի անդամներին

Փորձագիտական խմբերում աշխատանքն ավարտելուց հետո աշակերտներն վերադառնում են հենակետային խմբեր: Յուրաքանչյուր փորձագետ սովորեցնում է իր թեման, պարզում թո՞ղ որքանով են իր դասընկերները յուրացրել այն:

Քայլ 4. Գնահատում

Խճանկարի ժամանակ գնահատումը պետք է իրականացնել երեք մակարդակներով

- 1) Պարզել թե՞ որքանով են խմբերը արդյունավետ գործում, որքանով են բարելավվել սովորողների համագործակցային աշխատանք կատարելու հմտությունները:
- 2) Որքանով են աշակերտները կարողանում վերլուծել և սովորեցնել իրենց ընկերներին:
- 3) Որքանով է յուրաքանչյուր աշակերտ յուրացրել ուսումնական նյութը, առաջադիմել և արժևորել ստացածը

Խմբային գործընթացի գնահատում

Խմբային գործընթացը գնահատելիս անհրաժեշտ է պարզել թե՞ որքանով են սովորողները արդյունավետ աշխատում խմբի ներսում : Սա ներառում է խոսելու, լսելու, մտքերը կիսելու, խմբին օգնելու, աջակցելու հմտությունները: Այդ նպատակով կարելի է տալ հետևյալ հարցերը.

- 1) Արդյո՞ք խմբի բոլոր անդամները մասնակցում էին խմբային աշխատանքին
- 2) Ինչո՞վ օգնեց խմբային աշխատանքը նյութի յուրացմանը:

Փորձագիտական աշխատանքի գնահատում

Այս դեպքում գնահատվում են աշակերտների փորձագիտական աշխատանքներ կատարելու հմտությունները: Օրինակ՝ ունե՞ն արդյոք պաստառներ կազմելու, չափումներ անելու(օրինակ՝ անոթազարկի չափում), դիագրամներ և գրաֆիկներ կազմելու (օրինակ՝ արյան հոսքի հետ կապված), ձեռքի տակ եղած նյութերը օգտագործելու և դասընկերներին սովորեցնելու հմտությունները:

Գնահատման հարցադրումները

- 1) Արդյո՞ք կարող են օգտագործել իրենց գիտելիքները, հմտությունները և կարողունակությունները արյունահոսությունների դադարեցման դեպքում՝ վիրակապ և ռետինե քուղ դնել, անոթազարկ չափել
- 2) Կարո՞ղ են հաղթահարել իրենց վախերը:
- 3) Ցանկանո՞ւմ են ավելի իմանալ թեմայից:

Փորձարարական հետազոտություն

3.1 Խմբի նկարագիրը

Ես իմ հետազոտական աշխատանքը անցկացրել եմ Գեղարքունիքի մարզի Մարտունի քաղաքի Լիճքի միջնակարգ դպրոցի 8-րդ դասարանում: Այդ դասարանում սովորում են 20 աշակերտներ՝ 11-աղջիկ և 8-տղա, նրանք ունեն տարբեր առաջադիմություն և հմտություններ:

Կենսաբանություն առարկան անցնում ենք շաբաթական երկու ժամով: Դասացուցակում ներառված են երրորդ և չորրորդ ժամերին: Իմ հետազոտական աշխատանքը անցկացրել եմ այս դասարանում: Թեման՝ առաջին օգնությունը սիրտանոթային հիվանդությունների և արյունահոսությունների ժամանակ: Ունեմ հստակ նպատակ՝ թեման ուսուցանելիս չափորոշչային պահանջներից չչեղվել և աշակերտների մոտ ձևավորել **աղձնիհամակարգ**, որը կտանեն կյանք: Այն է՝ ընդլայնել գիտելիքներն առողջ ապրելակերպի, հիգիենիայի հիմնական կանոնների, ճիշտ սնման, ֆիզիկական մարզվածության, օրգանիզմի կոփման նշանակության մասին: Զարգացնել կարողունակություններ վնասակար սովորույթներից (ծխել, ալկոհոլի, թմրանյութերի օգտագործում, թերշարժունություն) գերծ մնալուց: Զարգացնել առաջին օգնություն ցույց տալու ինքնուրույն կարողունակություն և համագործակցային կարողություններ և հմտություններ: Տվյալ իրավիճակում կազմակերպել անհետաձգելի օգնություն, որը կարող է կյանք փրկել:

3.2 Փորձարարական դաս առաջին

Այսօրվա իմ դասի թեման է <<Սիրտանոթային համակարգի հիգիենիան: Առաջին օգնություն արյունահոսությունների դեպքում>>:

Դասը սկսվեց հաճախումների հաշվառում անելով, հետո ստուգեցինք տնային առաջադրանքները: Առաջադրանքն այսպիսին էր՝ ինչու ցուցամատը ձիգ կապելիս մատը կարմրում է, հետո սպիտակում ,ապա անձգայնանում ու սկսում ծակծկել: Աշակերտները ինքնուրույն կատարել էին փորձը, հանգել ճիշտ եզրակացության: Մատը ձիգ կապելիս դադարում է արյան հոսքը դեպի վերջույթ, առաջանում է թթվածնաքաղց, որն թլ բերում է ծակծկեցների առաջացման: Ապա փոքրիկ մտազրոհով խթանեցինք նոր նյութի մատուցումը: Դասը սկսվեց մեծ աշխուժությամբ,

որոշվեց նյութի յուրացումը կազմակերպել օգտագործելով համագործակցային ուսուցման մեթոդ՝ **խճանկար**: Թեման վերաբերվում էր սիրտանոթային հիվանդությունների և արյունահոսությունների դեպքում առաջին օգնություն կազմակերպելու հմտությունների զարգացմանը: Աշակերտները բաժանվեցին չորս հենակետային խմբերի: Յուրաքանչյուր խմբում ընդգրկվեց մեկ գերազանց, երկու միջին և առաջադիմությամբ և մեկ ցածր առաջադիմությամբ սովորող: Հենակետային խմբերին հանձնարարվեց սովորել ամբողջ թեման և հավաքել տեղեկատվություն: Նյութի յուրացումից հետո հենակետային խմբի յուրաքանչյուր սովորողի տրվեց առաջադրանք և փորձագիտական թերթիկ: Նա դառնում էր այդ խմբի <<Փորձագետը>>: Փորձագիտական խմբի յուրաքանչյուր փորձագետ ուսումնասիրում էր փորձագիտական թերթիկով իրեն հանձնարարված ենթաթեման: Փորձագիտական խմբի անդամները իրենք էին ընտրում թե ինչ մեթոդ, պաստառ կամ աղյուսակ ընտրեն, որ նյութը հեշտ մատուցեն մայր խմբի անդամներին: Յուրաքանչյուր փորձագիտական խումբ իր ենթաթեման(մեկին հանձնարարված էր երակային արյունահոսության կանխումը, մոյսին՝ զարկերեկային, երրորդին՝ մազանոթային իսկ չորրորդին՝ սիրտանոթային համակարգի հիգիենիան) սովորեց խմբով, համագործակցելով, իրար սովորեցնելով: Շատ կարևոր էր թույլ աշակերտի ներգրավվածությունը դասին, նա մեծ ոգևորությամբ պատասխանեց իրեն տրված հարցերին և անգամ պաստառի ստեղծման մեջ ցուցաբերեց մեծ ակտիվություն՝ ուներ ձևավորելու և նկարելու շնորհք: Դասն անցավ մեծ հետաքրքրությամբ, բոլորը ներգրավված էին ու հետաքրքրված: Արդյունքները ամփոփեցինք ըստ անհատական և խմբային ցուցանիշների: Գնահատման մեջ արժևորեցինք այն գիտելիքները, կարողությունները և հմտությունները, որոնք ձեռք բերվեցին 45-րոպեի ընթացքում: Հանձնարարվեց տնային աշխատանք՝ համացանցից դիտել թեմային առնչվող տեսանյութեր: Կարծում եմ մենք հասանք պետական չափորոշչով սահմանված նվազագույն արդյունքներին: Այդ արդյունքների ձևավորումը սկսվում է դարոցից, ապա՝ զարգանալով շարունակվում է ամբողջ կյանքի ընթացքում և դառնում կարողունակություն:

3.3 Փորձարարական դաս 2

Դասը անցկացրել եմ նույն դասարանում: Դասի թեման՝ <<Առաջին օգնությունը շնչառության խանգարումների դեպքում: Ծնչառական օրգանների հիգիենիան>>: Դասի սկզբում կատարվեց հաշվառում, ստուգվեց տնային աշխատանքը, կատարվեց շտկումներ: Նոր դասի սկզբի համար ընտրեցի հինգ րոպեանոց հետաքրքիր հոլովակ, որը կապված թր մեր նյութի հետ: Դիտելուց հետո առաջացավ մեծ հետաքրքրություն, սկսեցին հարցեր տալ, ապա անցանք բուն նյութի ուսումնասիրմանը: Դասարանը բաժանեցի հինգ խմբերի: Յուրաքանչյուր խմբի տրվեց դասի նյութից որոշակի առաջադրանք, կաշուն թղթեր, մարկերներ, պաստառ: Առաջադրանքի համար սահմանվեց որոշակի ժամանակ: Խմբերը սկսեցին համագործակցային աշխատանքը, իրար լսում էին, խոսում էին շշուկով, բացատրում, բանակցում և սովորեցնում էին իրար: Անհատականալի հարցերի մասին տալիս էի բացատրություն: Արդյունքում ձևավորվում էր`

ճանաչողական, նպատակային , խմբային գործընթաց: Աշակերտները խնդրեցին ավելացնել ժամանակը, ապա յուրաքանչյուր խումբ ներկայացրեց իր աշխատանքը՝ ցուցաբերելով: Մյուս չորս խմբերը լսում էին և քննարկում անհասկանալի մասերը: Երբ բոլոր խմբերը ներկայացրին իրենց նյութը, քննարկվեցին տերմինների հետ կապված մի քանի հարցեր: Դասի ամփոփման ժամանակ օգտագործեցի ելքի քարտեր: Նախապես պատրաստված քարտերը բաժանեցի աշակերտներին: Նրանց մեջ կային հստակ հարցադրումներ.

- ❖ Նշեք երեք բան, որ սովորեցիք այսօր:
- ❖ Նշեք երկու բան, որ ձեզ հետաքրքրեց այսօրվա դասից:
- ❖ Նշեք մեկ բան, որը կուզե՞նայիք նորից լսել, կամ որը ձեզ վախեցրեց:

Դասը շատ հետաքրքրեց սովորողներին: Անցավ աշխույժ ու շատ արագ: Սովորողները շատ ոգևորված էին: Գնահատվեց և խրախուսվեց խմբային, համագործակցային աշխատանքը: Թույլ աշակերտները շատ ակտիվ էին: Տրվեցին ուսուցողական (խրախուսանք, ձեռքբերումներ, թյուրմբռնում) գնահատական և միավորային(բանավոր նկարագրության, ստեղծագործական մտածողության և խմբային աշխատանքի գնահատում): Վերջում տրվեց տնային հանձնարարություն օգտվել համացանցից , հարստացնել իրենց գիտելիքները թեմայի հետ կապված: Նրանց գիտելիքները, կարողությունները և հմտությունները հստակ չափելի էին:

Վերլուծություն կամ եզրակացություն

Աշակերտների մոտ արժեհամակարգ ձևավորելու համար անցկացրեցի երկու փորձարարական դաս: Երկու դեպքում էլ դասի նյութի արդյունավետության համար կազմակերպեցի համագործակցային աշխատանք, օգտագործեցիք <<խճանկար մեթոդը>>: Նկատվում էր մեծ ոգևորություն դասի ընթացքում՝ իրար լսում էին, ցածր էին խոսում, դերային բաժանում արեցին, քննարկում էին և կանգ էին առնում ամենակարևորի վրա: Սա տվեց իր արյունքները: Ճիշտ հաղորդակցումը մեծապես նպաստում է համագործակցային ուսուցմանը: Ամենակարևորը՝ օգնում և բացատրում էին թույլ աշակերտին, ներգրավվում դասապրոցեսին հանուն խմբային բարձր ցուցանիշի: Այլևս ընդունելի են, որ ճիշտ ընտրված մեթոդները շատ կարևոր են արդյունավետ դաս վարելու համար: Յուրաքանչյուր նոր մեթոդ և հնար մեծապես նպաստում է ուսուցմանը: Մեր նպատակը՝ նյութի հետ կապված նոր կարողությունների ձեռքբերումն էր , կարող են հետո կազմակերպել առաջին օգնություն, դա կերևա կյանքում, եթե իրենք շարունակեն զարգացնել իրենց հմտությունները, ունենան համապատասխան վարք, դիրքորոշում և պատրաստակամություն նման դեպքերում դրսևորվելու:

Վերլուծելով իմ հետազոտական աշխատանքը ես եկա այն եզրակացության, որ գիտելիքը, կարողությունները և հմտությունները տալիս են իրենց պտուղները՝ ձևավորում են արժեհամակարգ: Հասկացա, որ աշակերտների մեծ մասը **կկարողանա**

- կազմակերպել արդյունավետ առաջին օգնություն ըստ իրակվիճակի:

- Տարբերակել ,ո՞ր դեպքում ինչպիսի՞ օգնություն պետք է տրվի
- Աջակցել աշխատանքների կազմակերպմանը
- Կարևորել գլխավորը երկրորդականից
- Կանխատեսել , հետևություններ անել
- Գնահատել ժամանակի կարևորությունը

Գրականության ցանկ

1. Համագործակցային ուսուցում: Ձեռնարկ/ Ա. Հովհաննիսյան, Կ. Հարությունյան, Ս. Խրիմյան.- Երևան.: Անտարես, 2006-124 էջ
2. Ս.Հ. Սիսակյան, Տ.Վ. Թանգամյան, Գ.Ի. Միրզոյան: Դասագիրք 8-րդ դասարանի համար << Կենսաբանություն Մարդ >> 2019թ.
3. Ադամյան <<Դասավանդման մեթոդիկայի արդի պահանջները>> ուսումնամեթոդական ձեռնարկ: << Էդիթ Պրինտ >> Երևան 2018
4. ՀՀ.ԿԳ նախարարություն: Կրթական ծրագրերի կենտրոն <<Կենսաբանություն>> չափորոշիչ և ծրագիր, Երևան 2009թ.

Դ ա ս ա պ լ ա ն 1

Ուսուցիչ՝ Ալինա Հովհաննիսյան

Առարկա՝	Կենսաբանություն	Ամսաթիվ	12.07.2022թ	Կիսամյակ	I	Դասարան	VIII
Թեմա՝	Ծնչառական օրգանների հիգիենիան: Առաջին օգնությունը շնչառական կանգառի դեպքում:						
Օգտագործվող նյութեր՝	Վահանակներ, պաստառներ, որոնք վերաբերվում են շնչահեղձության, ջրահեղձության և էլեկտրավնասվածքների, ինչպես նաև գիտակցության կորստի դեպքում առաջին օգնության կազմակերպելուն:						
Դասի նպատակը՝	Կարողանալ ձեռք բերել գիտելիք, որը կօգնի կյանքում օգնել շնորհալի թունավորման դեպքում, խնդրվելու դեպքում սրտի և շնչառության կանգի դեպքում:						
Ուսուցանման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ							
Վերջնարդյունքները	<p><i>Աշակերտը կկարողանա</i></p> <ul style="list-style-type: none"> • <i>Աշակերտների մոտ զարգացնել շնչառական օրգանների վնասվածքների ժամանակ առաջին օգնության կազմակերպման կարողություններ և հմտություններ:</i> • <i>Գիտենալ ձայնալարերի հիվանդությունը կանխող հիգիենիայի կանոնները:</i> 						
Գործողություններ(Ժամ/տևողություն)	Ուսումնական գործունեություն <i>Աշակերտներ</i>	Ուսումնական գործունեություն <i>Ուսուցիչ</i>	Հարցադրումներ		Կիրառվող մեթոդ (ներ)		
Դասի սկիզբ 1-2 րոպե	Դասն անցկացվում է համակարգչային կաբինետում: Նախօրոք աշակերտների 1-2 անգամ կարդացել են նյութը:	Ողջույն, ներկաբացակա			Մտազրոհ		
Բուն նյութի ընկալում 25 րոպե	Աշակերտները օգտվելով ցուցադրված նյութերից և հետևելով ուսուցչի պատմածին կազմում են կարճ հաղորդում շնչառական օրգանների այստահարման դեպքում առաջին օգնության կազմակերպման մասին:	Էլեկտրոնային գրատախտակի վրա ցուցադրվում է դասի նյութին առնչվող մեծ տեղեկատվություն:	Կարգադրումը		1. Ինչու՞ պետք է արագ կազմակերպել առաջին օգնությունը, քանի որ այն համար կարող է վտանգավոր լինել:		
Արժեհամակարգ 10 րոպե	<p>1) Աշակերտները կկարողանան առաջին օգնություն կազմակերպել շնչարգելության, խնդրվելու, գիտակցության կորստի, էլեկտրահարման ժամանակ:</p> <p>2) Խնդրվողին ջրից հանելիս մաքրում ենք բերանը և քիթը, երկտակում ենք ծնկի վրա և կտրուկ շարժումներով սեղմում փորն ու կրծքավանդակը (երեխային կարելի է կախել գլխի վայր, բռնել</p>						

	<p>նորից և թափահարել):</p> <p>3) Շնչահեղձության ժամանակ արձակում ենք օձիքը, լնգուն առաջ ենք քաշում, իսկ գլուխը թնքում են հետ: Քթին մոտեցնում ենք անուշադրի սպիրտ կամ սուր հոտով հեղուկ:</p> <p>4) Պետք է կարողանալ կազմակերպել սրտի անուղղակի մերսում, բերան ընդ բերան, կամ բերան ընդ քիթ, ներշնչում 1 րոպեում 10 անգամ, ապա կրծոսկրի ստորին մասում 4-5 հարվածանման սեղմումներ:</p>
Գնահատում կատարողների կարողունակությ ունը	<p>Բլումի տաքսոնոմիայի կիրառմամբ</p> <p>Հարգանք, պատասխանատվություն, օգնություն, ապրումակցում, գիտելիքի գործածում, ինքնաձանաչողության բարձրացում, հմտություններ: Այս բոլորը կլինի անձի դիրքորոշումը մեկ այլ անձի կամ երևույթի հանդեպ:</p>
Տնային աշխատանք 1-2 րոպե	<p>Պատասխանել հետևյալ հարցերին</p> <ol style="list-style-type: none"> 1) Արդյոք հետաքրքիր էր դասը 2) Ի՞նչն էր լավ, ի՞նչ սովորեցիք 3) Ի՞նչն էր կարևոր 4) Ի՞նչը կկիրառեի կյանքում 5) Ի՞նչը ձեզ վախեցրեց

Մեթոդախմբի անունը՝ _____

Փոխանորդ՝ _____

Դ ա ա պ լ ա ն 2

Ուսուցիչ՝ Ալինա Հովհաննիսյան

Առարկա՝	Կենսաբանություն	Ամսաթիվ	12.07.2022թ	Կիսամյակ	I	Դասարան	VIII
Թեմա՝	Սիրտ-անոթային համակարգի հիգիենիան: Առաջին օգնությունը արյունահոսությունների դեպքում:						

Օգտագործվող նյութեր՝	Դասագիրք 8-րդ դասարան, Թանյալյան, Սիսակյան №25, կաշուն թերթիկներ, գունավոր մարկերներ, նկարներ, պաստառներ, մարզված ու չմարզված սրտի նկարներ, քուղ, սնդմիչ վրակապ:			
Դասի նպատակը՝	<ol style="list-style-type: none"> 1) Ձևավորել գիտելիք սիրտ-անոթային համակարգի մասին 2) Իմանա ավելոելի, ծխախոտի և թերշարժունության ազդեցությունը օրգանիզմի և սիրտ-անոթային համակարգի վրա: 3) Իմանա առաջին օգնությունը արյունահոսությունների ժամանակ: 4) Իմանա առաջին օգնությունը սիրտ-անոթային հիվանդությունների ժամանակ: 			
Ուսուցանման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ				
Վերջնարդյունքները	<p><i>Աշակերտը կկարողանան</i></p> <ol style="list-style-type: none"> 1) Բոլորը՝ թվարկել այն գործոնները (ծխախոտ, ավելոել, թերշարժունություն և այլն), որոնք կազդեն սիրտ-անոթային համակարգի վրա: Նկարագրել արյունահոսությունների տեսակները, իմանալ որ օրգանիզմում կա 5-6 լիտր արյուն և 2.5 լ կորստի դեպքում մարդը կարող է մահանալ: 2) Աշակերտների մեծ մասը <ol style="list-style-type: none"> 1. կկարողանան հասկանալ, որ ավելոելը վնասում է սրտամկանը, որն էլ բերում է սրտի անբավարարության: 2. կկարողանան հասկանալ, որ յուրաքանչյուր ծխած մեկ գլանակից հետո անոթների լուսանցքը 10-15 րոպե մնում է նեղացած: Որ ծխելը դանդաղ մահ է: 3. կհասկանան, որ չափավոր ֆիզիկական ծանրաբեռնվածությունն ուժեղացնում է արյան մատակարարումը դեպի սիրտ: 4. կկարողանան տարբերել երակային, զարկերակային և մազանոթային արյունահոսությունները: 3) Աշակերտների որոշ մաս կկարողանա <ol style="list-style-type: none"> 1. զարկերակային արյունահոսության ժամանակ կազմակերպել առաջին օգնություն: Այն է՝ դնել սնդմիչ վրակապ վերքից վերև՝ ոլորելով և անպայման նշել ժամանակը: 2. կկարողանան դադարեցնել երակային արյունահոսությունը վնասված վերջույթը վերև բարձրացնելով և իհարկե սնդմիչ վրակապ դնելով: 3. կկարողանան մազանոթային արյունահոսության ժամանակ վերքը վարակազերծել յոթի թույլ լուծույթով և դնել մաքուր, ստերիլ վիրակապ: 4. քթի արյունահոսության ժամանակ պետք է կարողանան աղաջրով բամբակ դնել քթի խոռոչ, պահել 3-5 րոպե գլուխը հետ թեքած վիճակով: Եթե չի դադարում տեղափոխել հիվանդանոց: 			
Գործողություններ(ժամ/տևողություն)	Ուսումնական գործունեություն <i>Աշակերտներ</i>	Ուսումնական գործունեություն <i>Ուսուցիչ</i>	Հարցադրումներ	Կիրառվող մեթոդ(ներ)
Դասի սկիզբ 2 րոպե Խթանման փուլ 5 րոպե	Բացել դասագրքերը: Պատրաստվել նոր դասին: Ներկայացնել տնային աշխատանքը: Աշակերտները բաժանվում են 4 հենակետային խմբերի: Խմբի յուրաքանչյուր անդամ դառնում է որևէ	Ողջունել, կատարել հաշվառում: Ստուգել տնային առաջադրանքները: Բացատրել սխալները: Ուսուցիչը բացատրում է դասը և տրամադրում է հարցեր: Կաշուն թղթերով համարակալում է խմբերը: Ընտրում է մեկ ուժեղ և չորս միջին աշակերտներ:	<ol style="list-style-type: none"> 1) Ի՞նչ են սովորելու 2) Ի՞նչ է կարևոր 3) Ի՞նչ պիտի կիրառեն կյանքում: 	Մտազրոհ Խճանկար

<p>Իմաստի ընկալման փուլ 25րոպե</p> <p>Կշռադատման փուլ 5րոպե</p>	<p>Ենթաթեմայի փորձագետ: Սկսում են ուսումնասիրել նյութը, համեմատում և գտնում են կարևորը:</p> <p>Յուրաքանչյուր փորձագետ սովորեցնում է խմբի մյուս անդամներին: Կազմում են պատասա: Բոլորը պատմում են նյութը: Մեկը ներկայացնում է պատասաի ձևավորումը:</p> <p>Ամրագրում են նորի կապը հին դասի հետ:</p>	<p>Տրամադրում է բաշխիչ նյութը, սահմանում է խմբի նպատակը և հետևում բոլոր խմբերի աշխատանքներին:</p> <p>Ուսուցիչը մշտապես հետևում է, օժանդակում բացատրում անհասկանալին:</p>		
<p>Գնահատում 3 րոպե</p>		<p>1/ <u>Ուսուցանող</u> ինչպիսի համագործկցային հմտություններ ձեռք բերեցին, ինչ ձեռքբերումներ և բացթողումներ կային:</p> <p>2/<u>Միավորային</u></p> <p>Անհատական և խմբի գնահատում:</p>		
<p>Անդրադարձ</p> <p>Արժեքահամակարգի ձևավորում 4րոպե</p>	<p>1) Ի՞նչ նոր բան սովորեցինք 2) Ի՞նչն էր կարևոր 3) Ի՞նչը կկիրառենք կյանքում 4) Ի՞նչն էր դժվար</p>			
<p>Տնային աշխատանք 1ր</p>	<p>Օգնովել ՏՀՏ-ից ավելին իմանալու համար և զարգացնելու գործնական կարողությունները:</p>			

Մեթոդախափորման նախագահ՝ _____

Փոխանորեն՝ _____

ԹԵՍՏ

Դասարան _____

Աշակերտ _____

Ամիս, ամսաթիվ « » _____ 2022թ.

1. Ինչո՞վ է պայմանավորված արյան ճնշումը

Պատասխան

1. _____
2. _____
3. _____
4. Արյան մածուցիկությամբ

3 միավոր

Ընդգծի՛ր ճիշտ պատասխանը

2. Ո՞ր անոթներում է արյան ճնշումն ամենացածրը.

ա/ զարկերակներում
բ/ մազանոթներում
գ/ վերին և ստորին սիներակներում

1 միավոր

3. Ինչո՞վ է պայմանավորված արյան շարժումն անոթներով

ա/ արյունատար համակարգի տարբեր մասերում արյան հոսքի արագության տարբերություններով

բ/ արյունատար համակարգի տարբեր մասերում արյան ճնշման տարբերություններով

գ/ արյունատար համակարգի տարբեր մասերում անոթների լուսանցքի մեծության տարբերություններով

1 միավոր

4. Որտե՞ղ է արյան ճնշումն ամենաբարձրը

ա/ աորտայում

գ/ վերին և ստորին սիներակներում

բ/ մազանոթներում

1 միավոր

5. Մեծ քանակությամբ արյուն կորցնելու դեպքում մարդու արյան զարկերակային ճնշումը

ա/ բարձրանում է

բ/ իջնում է

գ/ չի փոփոխվում

1 միավոր

6. Անոթների լուսանցքը լայնանալու դեպքում արյան զարկերակային ճնշումը/ բարձրանում է
բ/ իջնում է
գ/ չի փոփոխվում

1 միավոր

7. Արյան ճնշումը նվազում է, երբ.

ա/ անոթների լուսանցքը լայնանում է և սրտի կծկումների հաճախությունը փոքրանում է
բ/ անոթների լուսանցքը նեղանում է և սրտի կծկումների հաճախությունը մեծանում է
գ/ անոթների լուսանցքը լայնանում է և սրտի կծկումների հաճախությունը մեծանում է


1 միավոր

8. Հնչաչափով որոշվել է, որ մարդու արյան ճնշումը կազմում է 120-80 մմ ս. ս: Այս թվերից թ՞րն է համապատասխանում փորոքների կծկման ժամանակ առաջացող ճնշմանը:

Պատասխան _____

1 միավոր

9. Նկարում պատկերված 2 կորերից ո՞րն է արտացոլում արյան շրջանառության մեծ շրջանում արյան ճնշման փոփոխությունները: Գրի՛ր այդ կորի համարը:



Պատասխան _____

1 միավոր

10. Անոթների պատերի պարբերական տատանումները, որոնք առաջանում են արյան ճնշման փոփոխությունների հետևանքով, սրտի կծկումների ռիթմին համապատասխան, անվանում են

1 միավոր

Ընդգծի՛ր ճիշտ պատասխանը

11. Անոթազարկով կարելի է որոշել.

ա/ արյան հոսքի արագությունը
բ/ սրտի կծկումների հաճախությունը

գ/ արյան հոսքի ուղղություն